Ազգ
Azg
23 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 181(5264)
ISSN: 1829-1651

# Մեկ զոհ, երեք վիրավոր

*Հակառակորդը կրակ է բացել Բերդ-Իջեւան ավտոճանապարհին*

Երեկ ցերեկը Տավուշի մարզի Բերդ-Իջեւան ավտոճանապարհի Պառավաքարի հատվածում հակառակորդը կրակ է բացել ավտոճանապարհով ընթացող մեքենաների վրա: Հակառակորդի կրակահերթից տուժել են քաղաքացիական եւ զինվորական մեքենաներ:

Պաշտպանության նախարարությունից «Ազգ»-ին տեղեկացրին, որ զինծառայողներին մարտական հերթապահության տեղափոխող զինվորական մեքենաների շարասյան վրա բացված կրակի հետեւանքով զոհվել է ժամկետային զինծառայող, 19-ամյա շարքային Գարիկ Պողոսյանը: Հրազենային տարբեր աստիճանի վիրավորումներ են ստացել ժամկետային զինծառայողներ, շարքայիններ Արթուր Անդրանիկյանը, Արայիկ Ժամհարյանն ու Մարտին Պետրոսյանը:

ՊՆ-ն դեպքի մասին համապատասխան իրազեկում է կատարել ԵԱՀԿ հատուկ ներկայացուցիչ Անջեյ Կասպրշիկի գրասենյակին: Միաժամանակ նախարարությունը հայտարարել է, որ հակառակորդի այս հանցավոր քայլն անպատասխան չի մնա եւ հերթական անգամ կատարված սադրանքի պատասխանատվությունը կմնա սանձազերծողի վրա:

Հ. Հ.

# Զարուհուց մինչեւ պետական պաշտոնյաների աշխատավարձ



ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ահա թե ինչ նուրբ, բայց ցավոտ մեթոդի մասին էր խոսում Զարուհի Փոստանջյանը, երբ օրեր առաջ ասում էր, թե Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը չի կարող իրեն զրկել ԵԽԽՎ պատվիրակության անդամի մանդատից, եւ որ՝ իրենց պատասխանը նուրբ է լինելու, բայց ցավոտ. երեկ օրվա առաջին կեսին տեղի ունեցավ «Ժառանգություն» խմբակցության նիստը, որի ընթացքում խմբակցության ղեկավար Ռուբեն Հակոբյանը հրաժարվեց պաշտոնից՝ անձնական եւ Ստրասբուրգում տեղի ունեցածի հետ կապ չունեցող անվանելով իր այդ որոշումը: Ընդամենը չորս անդամ ունեցող այս խմբակցության ղեկավար քվեարկությամբ դարձավ Զարուհի Փոստանջյանը, քարտուղար՝ Թեւան Պողոսյանը:

Ու չնայած Փոստանջյանը լրագրողներին ասում էր, որ Ռուբեն Հակոբյանի որոշումն անսպասելի էր, վերջինս էլ չէր մեկնաբանում իր որոշումը, սակայն ակնհայտ է, որ սա կապ ունի դեռեւս առավոտյան Հովիկ Աբրահամյանի եւ խմբակցությունների խորհրդակցության հետ, որտեղ ԱԺ պատվիրակությունների կազմավորման նոր առաջարկներ էին ներկայացվել՝ խորհրդարանի համամասնությանն ավելի համապատասխանող միջազգային պատվիրակությունների կազմություն ունենալու առումով ու այդպիսով վտանգի տակ դնելով փոքր խմբակցությունների ներկայացվածության հանգամանքը: Չնայած պաշտոնապես ժխտվում է առաջարկի հեռահար կապը Զարուհի Փոստանջյանին ԵԽԽՎ պատվիրակությունում փոխելու ԱԺ նախագահի որոշման հետ:

Տես էջ 2

# Ի՞նչ է անում ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահը Բաքվում



ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

**Վերլուծաբանները կարեւորում են, որ ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահ Ուորլիկն արդեն «երկրորդ սեպարատ ուղեւորությունն է կատարում»: Ընդգծվում է նաեւ, որ, ի տարբերություն առաջին այցի, ամերիկացի դիվանագետն «այս անգամ Երեւան չի ուղեւորվի»:**

**Հատկանշական է նաեւ, որ Ուորլիկը Բաքու է այցելել Իլհամ Ալիեւի «երդմնակալության» հենց հաջորդ օրը: Պաշտոնական հաղորդագրության համաձայն, ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահը հանդիպումներ եւ «արդյունավետ քննարկումներ է ունեցել նախագահ Ալիեւի եւ արտգործնախարար Մամեդյարովի հետ»:**

**Ուորլիկի Ադրբեջան այցը տեղի է ունեցել այն պահին, երբ այդ երկրի կառավարությունը ողջ կազմով հրաժարական է ներկայացրել՝ կապված նախագահի պաշտոնում Իլհամ Ալիեւի «վերընտրվելու» հետ:**

Տես էջ 3

# ԵՄ- Թուրքիա անդամակցության բանակցությունների նոր փուլ

Եվրոմիությունը հոկտեմբերի 22-ին որոշել է Թուրքիայի հետ բանակցությունների նոր փուլ սկսել այդ երկրի անդամակցության հարցի շուրջը: Այդ մասին հայտարարել են ԵՄ-ում ներկայումս նախագահող երկիր Լիտվայի իշխանությունները:

Եվրոհանձնաժողովի հանձնարարականներին հետեւելով՝ ԵՄ երկրների եվրոպական գործերի նախարարները Լյուքսեմբուրգում իրենց հանդիպման ժամանակ պայմանավորվել են առաջիկա նոյեմբերի 5-ից ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության բանակցությունների նոր փուլ սկսել 3 տարվա ընդմիջումից հետո, հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Գ. Ք.

# Հայաստանն առավել կայուն է, քան տարածաշրջանի մյուս երկրները

Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոնի տնօրեն, քաղաքագետ **Ռիչարդ Կիրակոսյանը**, անդրադառնալով Վիլնյուսի գագաթաժողովից առաջ տարածաշրջանային զարգացումներին՝ երեկ «Peoplemeter» ակումբում լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ Մաքսային միությանը Հայաստանի միանալու որոշումը հարցերի տեղիք է տալիս, քանի որ Հայաստանի նախագահը դեռեւս չի բացատրել Մաքսային միությանը Հայաստանի միանալու որոշման հանգամանքները: Ռուսաստանը նույնպես չի ասել, թե ե՞րբ ու ինչպե՞ս է Հայաստանը միանալու Մաքսային միությանը: Իսկ իր որոշմամբ Հայաստանն ավելի շատ ոչ ասաց Եվրոմիությանը, քան այո Մաքսային միությանը:

Քաղաքագետի խոսքով՝ Հայաստանն առավել կայուն երկիր է, քան տարածաշրջանի մյուս պետությունները, սակայն այսօր այս առավելությունը վտանգի տակ է: Իսկ հայ-ռուսական հարաբերությունները, ըստ Ռիչարդ Կիրակոսյանի, թեեւ շատ կարեւոր են, սակայն քննադատելի են դրանցում առկա վստահության պակասն ու անհամաչափությունը:

Ռիչարդ Կիրակոսյանը նաեւ ընդգծում է, որ դեռեւս հստակ չէ՝ Հայաստանն իրապես կանդամակցի՞ Մաքսային միությանը, թե՞ ոչ. «Իրականում Սերժ Սարգսյանը սեպտեմբերի երեքին ոչ մի փաստաթուղթ չի ստորագրել, եւ նրա մշուշոտ խոստումը դեռեւս փաստ չէ»: Բացի դրանից՝ հետաքրքրական եւս 2 զարգացումներ են տեղի ունեցել Մաքսային միությանը միանալու որոշումից հետո: Ըստ նրա՝ Բելառուսն ու Ղազախստանն այնքան էլ հակված չեն Հայաստանին ընդունելու Մաքսային միության շարքերը, եւ երկրորդ զարգացումն այն է, որ հիասթափություն ապրեցին օտարերկրյա ներդնողները, որոնք կցանկանային ներդրումներ անել ոչ թե Մաքսային միության, այլ Եվրոմիության հետ սերտ կապեր ունեցող պետությունում:

Ի. Պ.

# Հաց եւ արդարություն

*Հասարակության ամենացավոտ խնդիրները*

Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատար Նիլս Մուիժնիեկսը եւ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Կարեն Անդրեասյանը երեկ հանդիպել են սիրիահայ ներգաղթյալներին, ծանոթացել նրանց խնդիրներին:




«**Ազգ**»-ի հարցին **Նիլս Մուիժնիեկսը** պատասխանեց, որ Եվրոպայում զարմացած էին եւ տեղյակ չէին, որ Հայաստանում 7000-10000 սիրիահայ կա:

«Նրանք ասացին, որ գոհ են Հայաստանի իշխանությունների ընդունելությունից, ինչը չեն կարող ասել եվրոպական այլ երկրների իշխանությունների իրենց հայրենակիցների մասին: Սա ազդակ է, որ եվրոպական երկրները պետք է կարողանան ավելի խորությամբ ընկալել սիրիական խնդիրը», ասաց հանձնակատարը:

ՄԻՊ **Կարեն Անդրեասյանն** էլ ասաց, որ թեպետ սիրիահայերը գոհ են մնացել Հայաստանի իշխանություններից, սակայն ունեն երկու խնդիր՝ չեն կարողանում աշխատանք գտնել եւ բախվում են սոցիալական անարդարություններին:

«Ես համոզված եմ, որ այդ պատասխանը կտան ոչ միայն սիրիահայերը: Հետեւաբար Հայաստանի համար կարեւորագույն խնդիրները շարունակում են մնալ հացն ու արդարությունը: Հայաստանում մարդու իրավունքների առնչությամբ ամենալուրջ խնդիրը շարունակում է մնալ արդար դատաքննությունը, դատարանների ապօրինությունները շարունակվում են եւ խնդիրը շատ ցավոտ է: Տնտեսական-սոցիալական իրականությունը սարսափելի է, եւ հացի խնդիրը դարձել է արդիական»:

Հ. Հ.

# Զարուհուց մինչեւ պետական պաշտոնյաների աշխատավարձ

*1-ին էջից*

Բնականաբար՝ որպես պատվիրակության ղեկավար Զարուհի Փոստանջյանն այլ լիազորություններ է ունենալու, որի հետ ստիպված կլինեն խորհրդարանում հաշվի նստել, իսկ որ Զ. Փոստանջյանն ասում է, թե խմբակցության ղեկավարի փոփոխությունը կապ չունի Ստրասբուրգում կատարվածից հետո ստեղծված վիճակի հետ, սրան թույլ տվեք չհավատալ, որովհետեւ ակնհայտ է զուգահեռ ընթացած մարտավարությունը: Թե ինչ տարբեր սերունդների ու այդ առումով իր ու Ռուբեն Հակոբյանի մոտեցումների տարբերության մասին էր ավելի վաղ խոսում Փոստանջյանը, սա եւս անհասկանալի է, քանի որ նրա տարիքն էլ մանկական չէ, իսկ քաղաքականության մեջ մի 10-15 տարվա տարբերությունը ոչինչ չի նշանակում, կուսակցական որոշումներն էլ կապ չունեն տարիքային մոտեցումների հետ, դրա համար էլ կուսակցությունը տարբերվում է դիսկո ակումբից: Ի դեպ, ԱԺ միջազգային պատվիրակությունների ձեւավորման մոտեցման փոփոխությունը դեռեւս չի ձեւավորվում, մեկ քննարկմամբ դեռեւս ընդհանուր հայտարարի չեն եկել:

Վերադառնալով Ազգային ժողովի երեկվա նիստին, նշենք, որ նախորդ օրվանից քննարկվող «Զբաղվածության մասին» օրենքը եւ հարակից փաթեթը նորից բանավեճի առարկա էր ընդդիմության եւ իշխանության, նույնիսկ՝ այսպես կոչված այլընտրանքի ու իշխանության միջեւ: Սա հատկապես տեսանելի դարձավ երկու նախկին լրագրողների՝ Մարգարիտ Եսայանի եւ Նաիրա Զոհրաբյանի անուղղակի բանավեճում. առաջինն օրենքը գնահատեց որպես մարդկանց հոգեբանությունից պետությունից նպաստ ստանալու գաղափարը հանող, ուզվորի հոգեբանություն պատվաստելու սոցիալական քաղաքականությունից դանդաղորեն անցման քայլ դեպի այլ հոգեբանության, երբ գլխավորն աշխատելու հնարավորության ստեղծումն է, որպեսզի քաղաքացին պետությունից գումար չմուրա: Մի խոսքով՝ Մ. Եսայանը քննարկվողը հոգեբանություն փոխող օրենք էր համարում:



Ակնհայտորեն հենց նրան ուղղեց իր խոսքը ԲՀԿ անունից հանդես եկած Նաիրա Զոհրաբյանը՝ հոգեբանության փոփոխության մասին օրենքի ընդունման մեկնաբանությունն անընդունելի համարելով եւ հռետորական հարց տալով, թե մի՞թե ՀՀ քաղաքացիները մուրացիկ են, անընդունակ աշխատելու ու նպաստի սպասող միայն, որ այս օրենքով պիտի դուրս գան թմբիրից ու գնան աշխատելու եղած լայնածավալ աշխատատեղերում: Ըստ նրա՝ պետք չէ աբսուրդի հասցնել ամեն ինչ: Ու մի լավ քննադատեց կառավարությանը՝ հարցադրում անելով, թե որտե՞ղ են կառավարության խոստացած աշխատատեղերը, օրենքի տրամաբանությունը բացատրելով որպես «փող չկայի» մոտեցում (երբ քսան հազար մարդու համար ընդամենը տասնութ հազար դրամն էլ չի գտնվում այլեւս). «Ձուկ չկա, որ մարդիկ ձուկ բռնեն»՝ սա էլ Էդմոն Մարուքյանի մեկնաբանության մեկնաբանությունն էր. Մարուքյանը օրենքի նյութը կարճ ձեւակերպել էր, թե ձուկ տալու փոխարեն՝ ձուկ բռնել սովորեցնել է առաջարկում կառավարությունը, չնայած՝ Մարուքյանի համար եւս անորոշ էր, թե ինչ է լինելու նպաստների համակարգը հանելուց հետո, քանի որ լավ գաղափարը եւս երբեմն կարելի է փչացնել:

Իսկ ահա օրենքը ներկայացրած սոցապահովության նախարար Արտեմ Ասատրյանն ու գլխադասային հանձնաժողովի նախագահ Հակոբ Հակոբյանը խորհրդարանին բացատրում էին, թե փաթեթը հայեցակարգային փոփոխություններ է առաջարկում, նպաստ ստանալուն ուղղված միջոցներն առաջարկվում է ուղղել ակտիվ եւ փորձարկված ծրագրերի՝ աշխատատեղերի ստեղծման, գործազրկության նվազման, որ մարդիկ արդյունք ստեղծեն եւ իրենց խնդիրները լուծեն, եւ ոչ թե նպաստ ստանան: Փաթեթն էլ սահմանում էր պետության կողմից մատուցվող ծառայությունների տեսակները՝ ակտիվ ծրագրերի տեսքով, գործազուրկների սոցիալական պաշտպանության ձեւերը, պետական եւ մասնավոր ոլորտների համագործակցության ձեւերն այս ուղղությամբ:

Մտահոգությունները, սակայն, քիչ չէին այս փաթեթի առնչությամբ. Միեր Շահգելդյանին հետաքրքրում էին հաշմանդամներին ուղղած ծրագրերը եւ նրանց վերաբերյալ դրույթային հստակեցումները, Արծվիկ Մինասյանը մտահոգված էր, որ փաթեթի ընդունմամբ լրիվ զբաղվածություն չի ապահովվում, այլ միայն՝ ոչինչ չարտահայտող կայուն զբաղվածության մասին է խոսք գնում, ընդհանրապես նախագծի շատ դրույթներ հռչակագրային բնույթի են ըստ նրա. «Կտրում եք գործազրկության նպաստը՝ այլ ծրագրեր տեղափոխելով, մինչդեռ եթե ակտիվ ծրագիր ունենաք՝ գործազուրկներն ավտոմատ կտեղափոխվեն այնտեղ», ասաց:

Ռուբիկ Հակոբյանը ցանկությունների ժողովածու անվանեց փաթեթը, որ, միեւնույն է՝ չի կանգնեցնելու արտագաղթը:

Սոցիալական ապահովության նախարար Արտեմ Ասատրյանն այն կարծիքին չէր, որ բոլոր հարցերը մի օրենքով կարելի է լուծել: Զբաղվածությամբ ապահովելն էլ դժվար գործ համարեց, բայց եւ նշեց, թե կառավարությունը պատրաստ է դրան. «Դիսբալանս կա՝ մի կողմից թափուր աշխատատեղեր, մյուս կողմից աշխատանք փնտրողներ, ու այնպիսի աշխատանք պետք է տանենք, որ առաջարկ-պահանջարկը մոտեցնենք իրար», եզրափակեց նա քննարկումը:

Երեկ սկսվեց նաեւ «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին»՝ արդեն իսկ մինչեւ խորհրդարան գալը աղմուկ հանած օրենքի քննարկումը: Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Վաչե Գաբրիելյանը միայն հասցրեց ներկայացնել օրենքի տրամաբանությունը, այն է՝ ՀՀՀի ՀՀ նվազագույն աշխատավարձի հետեւողական բարձրացման վրա խարսխված փոփոխություններ, ըստ որոնց մոտակա հինգ տարիներին նվազագույն աշխատավարձի աճի հիման վրա համահարթվելու է աշխատավարձերի համակարգը, իսկ արդեն 2017 թվականին կունենանք միասնական աշխատավարձային քաղաքականություն: Փաստորեն ներդրվում են աշխատավարձերի միասնական սանդղակներ՝ տարիների չհիմնավորված անհամամասնությունները վերացնել փորձելով: Բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերը նվազագույնից յոթնուկեսից -ութ անգամ եւ որոշ դեպքերում՝ տասնվեց անգամ տարբերություն են տալու, որն ըստ Գաբրիելյանի՝ հայտնի միջազգային համակարգերի շրջանակում է:

Ավելի առարկայական կներկայացնենք այսօր շարունակվելիք քննարկումից հետո:

# ՎիվաՍել-ՄՏՍ-ը վճարում է հայաստանյան տարբեր բուհերում սովորող եւս 100 ուսանողի ուսման վարձը

ՎիվաՍել-ՄՏՍ-ը շարունակում է հատուկ կարիքներ ունեցող, ծնողազուրկ եւ սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող առաջին եւ երկրորդ կուրսի ուսանողների «Կրթական հիմնադրամ» նախագիծը: 2010 թվականից սկսած ընկերությունը վճարում է երեւանյան եւ մարզային բարձրագույն ուսումնական հաստատությունների 200 ուսանողի ուսման վարձը: Այս տարի նրանց թիվն ավելացել է եւս հարյուրով:



Կրթաթոշակային այս աննախադեպ նախագիծը նպատակ ունի ուսուցման ամբողջ ժամանակահատվածում ուսման վարձը հատուցելով՝ կրթությունը հասանելի դարձնել խոցելի խմբերում ընդգրկված այդ ուսանողներին: Այս նախագիծը նրանց կքաջալերի նոր գիտելիքներ ձեռքբերելու եւ հմտությունները կատարելագործելու հարցում, ինչպես նաեւ կօգնի բարելավել սոցիալական եւ հոգեբանական վիճակը:

«Այս նախաձեռնությունն իրականացվում է խոցելի խմբերում ընդգրկված երիտասարդներին մասնագիտական գիտելիքներ եւ հմտություններ տրամադրելու եւ այդ կերպ՝ նաեւ երկրում աղքատությունը հաղթահարելու նպատակով: Խոշոր բիզնեսի կողմից ուսանողների ուսման վարձի վճարումը մշակույթ է, որը մենք սերմանում ենք Հայաստանում: Սա երկրի զարգացման մեջ առավել նշանակալի ներդրումներից է, եւ մենք վստահ ենք, որ ապագայում հպարտ կլինենք այդ ուսանողների ձեռքբերումներով»,- նշել է ՎիվաՍել-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

ԳՈՒՅԺ

# Գերմանիայում մահացել է ճանաչված լրագրող Գենոֆիա Մարտիրոսյանը



**Հանկարծահաս ծանր հիվանդության հետեւանքով Գերմանիայում մահացել է շուրջ 30 տարի լրագրությամբ զբաղվող Գենոֆիա Մարտիրոսյանը: «Երկիր մեդիա» հեռուստաընկերության լրագրող, Մարտիրոսյանին օգնելու նախաձեռնության հեղինակ Սեւակ Հակոբյանն «Արմենպրես»-ի հետ զրույցում նշեց, որ լրագրողի հոգեհանգստի եւ հուղարկավորության մանրամասները հայտնի կդառնան նրա աճյունը Գերմանիայից Հայաստան տեղափոխելուց հետո:**

**Լրագրողական գործունեության ողջ ընթացքում իր անաչառ վերլուծություններով ու երկրի քաղաքական, հասարակական, սոցիալական խնդիրների հանդեպ սրտացավ վերաբերմունքով, մարդկանց օգնելու պատրաստակամությամբ, գործընկերների կողմից շատ սիրված Ժենյան վերջին շրջանում օգնության կարիք ուներ: Նրա կյանքի միակ փրկությունը Գերմանիայում՝ Քյոլնի հիվանդանոցում բարդ վիրահատության եւ բուժման կուրսն անցնելն էր, ինչի համար ֆինանսական մեծ միջոցներ էին անհրաժեշտ՝ 60 հազար եվրո:**

**Գենոֆիա Մարտիրոսյանը շուրջ երեսուն տարի իր ավանդն էր ներդրել հայկական լրագրության մեջ: 1984 թվականից սկսած նա աշխատել է տարբեր պարբերականներում, այդ թվում՝ «Կոմսոմոլեց», «Ռեսպուբլիկա Արմենիա» եւ «Առավոտ» թերթերում: Նա եղել է «Ռեսպուբլիկա Արմենիա» օրաթերթի փոխխմբագիրը, 10 տարի անընդմեջ «Առավոտ» թերթի առաջնորդողների հեղինակն էր, իսկ 2003թ.-ից՝ «Աֆիշա» ամսագրի, այնուհետեւ՝ «Հայաստանի զրուցակից» շաբաթաթերթի գլխավոր խմբագիրը:**

***«Ազգ»-ը խորապես ցավակցում է հայտնի լրագրողի հարազատներին եւ բոլոր գործընկերներին:***

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ Տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# «Ցուցահանդեսը Հայաստանում ոսկերչության զարգացման կարեւորագույն դայմաններից է»

## Ըստ Հայ ոսկերիչների ասոցիացիայի փոխնախագահի՝ 100-ից ավելի մասնակիցներ են լինելու 20 երկրներից

***Հոկտեմբերի 28-30-ը Երեւանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում տեղի կունենա ոսկերչական խոշոր ցուցահանդես, որտեղ կցուցադրվեն աշխարհի բազմաթիվ երկրներում գործող հայ ոսկերիչների աշխատանքները։ Ցուցահանդեսի կազմակերպիչն է ավելի քան 10 հազար հայ ոսկերիչների միավորող Հայ ոսկերիչների ասոցիացիան, որի փոխնախագահի եւ Համաշխարհային ոսկերչության կոնֆեդերացիայի արտադրողների կոմիտեի նախագահ Արտակ Ուդումյանի հետ զրույցի ժամանակ անդրադարձանք ցուցահանդեսի նպատակներին եւ ասոցիացիայի կողմից Հայաստանում ոլորտը զարգացնելու ուղղությամբ նախատեսվող քայլերին։***



**- Պրն Ուդումյան, ո՞ր երկրներից եւ քանի՞ մասնակից է ունենալու նախատեսվող ոսկերչական ցուցահանդեսը:**

- Այս ցուցահանդեսն արդեն ավանդական է դարձել, երրորդ անգամ է Երեւանում կազմակերպվում նման ցուցահանդես: Այս անգամ ցուցահանդեսի մասշտաբները շատ ավելի մեծ են, մասնակիցների քանակը 100-ից ավելի է լինելու՝ Հայաստանից եւ մոտ 20 ուրիշ երկրներից: Համեմատության համար տեղեկացնեմ, որ նախանցյալ տարվա ցուցահանդեսին 28 մասնակից կար, անցյալ տարվա ցուցահանդեսին՝ 46: Այսինքն, մասնակիցների թվի աննախադեպ աճ կա, ինչը լուրջ հայտ է այս ցուցահանդեսը տարածաշրջանային դարձնելու համար, իսկ 20 երկրներից մասնակիցների առկայությունն արդեն վկայում է դրա միջազգային լինելու մասին: Մասնակցելու են ԱՄՆ-ից, Ռուսաստանից, Լիբանանից, Ֆրանսիայից, Քուվեյթից, Իսրայելից, Թաիլանդից, Կանադայից, այլ երկրներից: Այս տարի Թուրքիայից սպասում ենք հայ ոսկերիչների մեծ պատվիրակության: Այդ երկրից 25-30 մասնակից է լինելու: Մոտ 1,5 տարի առաջ Թուրքիայում ստեղծեցինք Հայ ոսկերիչների ասոցիացիայի բաժանմունքը, որի մեջ ընդգրկված են 860 հայ ոսկերիչներ: Կցանկանայի արձանագրել, որ համահայկական կառույցի մասնաճյուղ ստեղծելը Թուրքիայում իսկապես կարելի է երեւույթ համարել:

**- Ի՞նչ նշանակություն կունենա այս ցուցահանդեսը Հայաստանում ոսկերչության զարգացման համար:**

- Ոսկերչության զարգացման համար ցուցահանդես կազմակերպելը կարեւորագույն պայմաններից մեկն է: Դրա միջոցով արտերկրից ներգրավում ենք գործարարների, որոնք տեսնում են Հայաստանի ոսկերչությունը եւ սկսում են ընկալել Հայաստանը որպես ոսկերչության տարածաշրջանային կենտրոն: Բացի սրանից, մեր միությունն արդեն սկսել է աշխատանքները Հայաստանում ոսկերչության, ադամանդագործության եւ ժամագործության ազատ տնտեսական գոտի ստեղծելու ուղղությամբ: Այն լինելու է «Հայավիահամալիր» ձեռնարկության շենքում: Դա եւս կնպաստի Հայաստանում ոսկերչության զարգացմանը եւ այս ոլորտում մեր տարածաշրջանային կենտրոն դառնալուն: Նախատեսում ենք, որ մոտ 100 վարձակալներ կունենանք ազատ տնտեսական գոտում, որոնք կգան, ներդրումներ կկատարեն, արտադրություններ կստեղծեն, բացելով նոր աշխատատեղեր եւ բերելով նոր տեխնոլոգիաներ: Սա կնպաստի նաեւ հարակից ճյուղերի ստեղծմանը, այդ թվում տարբեր ծառայությունների զարգացմանը:

**- Միայն հայազգի՞ ոսկերիչներ են ժամանելու Հայաստան:**

- Ոչ իհարկե: Մենք բոլորին հայտնում ենք, որ Հայաստանի կառավարությունը ազատ տնտեսական գոտի է ստեղծել այս ոլորտը զարգացնելու համար, որ կարող են գալ, արտադրել, արտահանել իրենց արտադրանքը, որից եւ իրենք կշահեն, եւ մեր երկիրը: Ցուցահանդեսը տեղի է ունենալու մարզահամերգային համալիրի երկու՝ կոնֆերանսների եւ Արգիշտի դահլիճներում: Ներկայացվելու են հայ ոսկերիչների հանրահայտ միջազգային բրենդներ: Ակնկալում ենք, որ Հայաստանի նախագահը կկատարի բացումը: Հոկտեմբերի 30-ին տեղի է ունենալու Հայաստանում ոսկերգործության զարգացման խնդիրներին նվիրված կոնֆերանս, որին հրավիրված են եւ մասնակցելու են նաեւ Համաշխարհային ոսկերչության կոնֆեդերացիայի նախագահ Գաետանո Կավալերին, «Վիչենցա» համաշխարհային ցուցահանդեսների կազմակերպության ներկայացուցիչը, որի հետ ցուցահանդեսների կազմակերպման հարցում համագործակցության պայմանագիր ենք կնքել: Մի խոսքով, համեցեք ցուցահանդեսին, մուտքն ազատ է լինելու:

Հարցազրույցը՝ ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ

# Ի՞նչ է անում ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահը Բաքվում

*1-ին էջից*

Փաստացի նա հանդիպել է ԱԳ նախարարի պաշտոնակատար Մամեդյարովի հետ: Սա փոքր-ինչ տարօրինակ է:

Միաժամանակ, հայտնի է, որ նոյեմբերի սկզբներին ԵԱՀԿ ՄԽ համանախագահներն ամբողջ կազմով կլինեն Ադրբեջանում եւ Հայաստանում: Անոնսավորվել է, որ նրանք կփորձեն նախապատրաստել Սարգսյան-Ալիեւ հանդիպում: Դատելով ադրբեջանցի որոշ պաշտոնյաների երկիմաստ արտահայտություններից, Ուորլիկը Բաքվում էր, որպեսզի բարձր մակարդակի հանդիպման հարցը նախապես քննարկի Իլհամ Ալիեւի հետ:

Վերջինս, ինչպես հայտնի է, կապված նախագահական ընտրությունների հետ, «թայմ-աուտ» էր խնդրել: Ավելի վաղ միջնորդները հույս ունեին Սարգսյան- Ալիեւ հանդիպում կազմակերպել «ամառվա վերջին-աշնան սկզբին»: Այսօր խոսվում է «մինչեւ նոյեմբերի վերջը» նման հանդիպում կազմակերպելու հնարավորության» մասին:

Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովը երեկ ասել է, թե իրենք չեն մերժում նման հանդիպման կարեւորությունը, «բայց հանդիպում՝ հանուն հանդիպման անհրաժեշտություն չեն տեսնում»: Ազիմովի խոսքերով, Ադրբեջանը «հակառակ կողմից (Հայաստանից) չի տեսնում կարգավորման պատրաստակամություն»:

Սա, իհարկե, ադրբեջանական ստանդարտ դեմագոգիա է: Բայց դրանից կարելի է ենթադրել, որ Իլհամ Ալիեւը պատրաստ չէ բարձր մակարդակի հանդիպման: Ադրբեջանում հետընտրական իրավիճակը չափազանց բարդ է ստացվել՝ ի հակակշիռ վարչախմբի լավատեսության: Այնքան բարդ, որ Իլհամ Ալիեւը որեւէ փոփոխություն կատարելու համարձակություն իսկ չունի:

Երեկ նա խորհրդարանին է ներկայացրել նոր-գործող վարչապետ Արթուր Ռասիզադեի թեկնածությունը, եւ Միլլի մեջլիսն իսկույն դակել է նախապես պատրաստի որոշումը: Ռասիզադեն 78 տարեկան է, կառավարությունում աշխատում է1980-ական թվականներից, եղել է խորհրդային Ադրբեջանի Նախարարների խորհրդի նախագահի (վարչապետի) տեղակալ, առաջին տեղակալ, վարչապետի պաշտոնում նշանակվել Հեյդար Ալիեւի օրոք:

Ռասիզադեի վերանշանակումը խոսում է այն մասին, որ «այս իշխանությունը որեւէ բարեփոխման պատրաստ չէ», իրավիճակը գնահատել է քաղաքագետ Զարդուշտ Ալիզադեն: Պատճառն այն է, որ «ընտրություններից» հետո Իլհամ Ալիեւի վարչախումբը հայտնվել է գրեթե միջազգային մեկուսացման մեջ: Արտաքին աջակցության բացակայության պայմաններում գնալ ուժերի վերադասավորության, հավասար կլիներ ինքնասպանության, քանի որ չկա երաշխիք, որ «հին-հեյդարալիեւյան գվարդիան» վրեժխնդիր չի լինի:

Նման հիմար իրավիճակում հայտնված Իլհամ Ալիեւը չի կարող ԼՂ հարցում որեւէ պատասխանատվություն ենթադրող քայլի գնալ, իսկ բարձ մակարդակի հանդիպման փաստն ինքնին կխոսեր ինչ-որ կարեւոր քայլերի մասին: Ահա թե ինչու է Արազ Ազիմովը «հիվանդ գլխից առողջի վրա» բարդում սեփական երկրի խնդիրները:

Իրավիճակին բավական զավեշտ է հաղորդել ԵԱՀԿ ՄԽ ամերիկացի համանախագահը: «Թուրան» գործակալության հաղորդմամբ, դեսպան Ուորլիկը «Թվիթերի» անձնական միկրոբլոգում այսպիսի գրառումներ է արել Բաքվից ստացած տպավորությունների մասին. «Ճաշեցի արտգործնախարար Մամեդյարովի հետ, փիթի էր հյուրասիրել, գառան միսը սքանչելի էր, բայց որտե՞ղ գտնեմ իսկական ադրբեջանական ձեռագործ գորգ»:

Եթե ադրբեջանական լրատվամիջոցն ամերիկացի համանախագահին անվանարկելու խնդիր չի ունեցել, եւ դեսպան Ուորլիկն իրոք նման գրառումներ է թողել, ապա կարելի է միայն պատկերացնել, թե ինչքան «արդյունավետ» են եղել Բաքվում նրա հանդիպումները:

## ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ

# Միեր Կարապետյան



**Կյանքի 74-րդ տարում վախճանվեց հանրապետության ճանաչված պատմաբան, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Միեր Ստեփանի Կարապետյանը:**

**Մ. Կարապետյանը ծնվել է 1939 թ. դեկտեմբերի 11-ին Երեւանում, ուսուցչի ընտանիքում:**

**1962-ին ավարտելով Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի պատմալեզվագրական ֆակուլտետը՝ նա իր ամբողջ գիտակցական կյանքը կապեց մանկավարժական մայր բուհի հետ:**

**1964 թ. ընդունվել է Մանկավարժական ինստիտուտի առկա ասպիրանտուրան՝ հայոց պատմության գծով:**

**1967-1975 թթ. աշխատել է իբրեւ ինստիտուտի գիտական քարտուղար:**

**1972-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն եւ ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:**

**1975-1995 թթ. եղել է հայոց պատմության ամբիոնի դոցենտ:**

**1996-ին պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, այնուհետեւ ստացել պրոֆեսորի կոչում:**

**1997-ից մինչեւ օրս հայոց պատմության ամբիոնի վարիչն էր:**

**Մ. Կարապետյանը հեղինակ է շուրջ 100 գիտական եւ ուսումնամեթոդական աշխատանքների, որոնցից տասը՝ մենագրություններ եւ ուսումնական ձեռնարկներ: Նրա աշխատությունները վերաբերում են հայ ազգային-ազատագրական շարժման եւ Հայոց ցեղասպանության պատմության եւ պատմագրության հարցերին:**

**Մ. Կարապետյանի ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություններ են պաշտպանել բազմաթիվ ասպիրանտներ եւ հայցորդներ: Նա սիրված դասախոս էր, ուսանողների եւ գործընկերների համար՝ ջերմ զրուցակից: Մ. Կարապետյանը մանկավարժական համալսարանի եւ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի հայոց պատմության մասնագիտական խորհուրդների անդամ էր: Երկար տարիներ ղեկավարել է Մանկավարժական համալսարանի գիտական խորհրդի գիտական եւ ուսումնամեթոդական հարցերի հանձնաժողովի աշխատանքները:**

**Մ. Կարապետյանը պարգեւատրվել է Մովսես Խորենացու, Խաչատուր Աբովյանի մեդալներով, Ֆրիտյոֆ Նանսենի հուշամեդալով:**

**Մ. Կարապետյանի հիշատակը հավերժ կմնա նրան ճանաչողների սրտերում:**

***Հոգեհանգիստը տեղի կունենա հոկտեմբերի 23-ին, ժամը 18:00-ից, Սբ Հովհաննես եկեղեցում, թաղումը՝ հոկտեմբերի 24-ին, ժամը 14:00-ին:***

 





# Արտագաղթի կանխման եւ դեմոգրաֆիկ խնդրի կարգավորման չորս անհապաղ միջոցառումների առաջարկ

Հայաստանում արտագաղթը աղետալի չափերի է հասել: Տարբեր մարդկանց գնահատմամբ՝ արդեն մուտք է գործում էվակուացիոն փուլ: Կուսակցությունները, հասարակական սեկտորը եւ հասարակությունն ընդհանրապես անընդհատ բարձրաձայնում են այս մասին: Սակայն հայրենի իշխանության համար կարծես՝ ձայն բարբառո անապատի: Բանը հասել է նրան, որ արդեն հայտնի, հեղինակավոր մարդիկ դիտավորություն են տեսնում սրա մեջ եւ տարբեր վարկածներ առաջ քաշում՝ արտաքին պարտքերի զիջում, Հայաստանի տարածքը որպես պոլիգոնի օգտագործում եւ այլն...

Չեմ ուզում երկրում տիրող իրավիճակը վերագրել իշխանությունների դիտավորությանը, այլ ավելի շատ հակված եմ եզրակացնելու, որ ամենօրյա բազմակողմ զբաղվածության հորձանուտում եւ համապատասխան կառույցների բացակայության պայմաններում ժողովրդագրական խնդիրը մնացել է հետին պլանում: Բացակայում է նաեւ հասարակության եւ իշխանության միջեւ կապը, վերջինիս թվում է, թե ամեն ինչ կարգին է, իսկ հասարակությունն էլ որեւէ դրական փոփոխությունից հույսը կտրած՝ հեռանում է:

Առհասարակ, մերօրյա Հայաստանը նման է մի մեծ ընտանիքի, որտեղ մայրը բացակայում է: Այդ ընտանիքի բնակարանը շատ կեղտոտ է, ավագ եւ ճարպիկ երեխաները խլել են փոքրերի ու ավելի թույլերի հացը եւ գեր ու բախտավոր են, իսկ մյուսները լացակումած թափառում են:

Որպես մեր մեծ ընտանիքի ներկա իրավիճակով մտահոգված մի անդամ, ով համոզված է, որ մեր երկրում դեռեւս հնարավոր է ոչ միայն կասեցնել արտագաղթը, այլեւ վերափոխել ներգաղթի, ներկայացնում եմ մեր կազմակերպության տեսլականը այն միջոցառումների վերաբերյալ, որոնք բարձրացված խնդրի լուծումն են:

Եվ այսպես՝ ժողովրդագրական խնդիրը մեր երկրում բաղկացած է երկու հիմնական մասից՝ ծնելիությունից եւ արտագաղթից:

Ծնելիության ցածր մակարդակի պատճառները ե՛ւ սոցիալական են, ե՛ւ կախված են տվյալ ժամանակաշրջանում ավանդույթ դարձած ընտանիքի մոդելից: Եթե մոտ հարյուր տարի առաջ ավանդական հայ ընտանիքներում միջինը ծնվում էր 7-10 երեխա, ապա մոտ հիսուն տարի անց արդեն այդ թիվը հասնում էր 4-5-ի գյուղական վայրերում եւ 2-3-ի՝ քաղաքներում, իսկ այժմ արդեն հայ ընտանիքներում հիմնականում ծնվում է 2 երեխա, առանձին դեպքերում՝ 3-ը: Հաճախակի չեն այն դեպքերը, երբ ապահով ընտանիքներում կան երկուսից ավելի երեխաներ: Ուրեմն այստեղ գործ ունենք ընտանիքի մոդելի նորաձեւության հետ:

Եթե ծնելիության ցածր մակարդակի թվարկված առաջին պատճառի համար պետության կողմից պահանջվում են ֆինանսական ներդրումներ, ապա երկրորդը հնարավոր է կարգավորել առանց որեւէ ներդրման: Մեր օրերում ավանդույթ է եկեղեցով հայ ընտանիքների կազմավորումը, ուրեմն այստեղ պետք է խառնվի եկեղեցին եւ բացատրական աշխատանք տանի ամուսնացող զույգի հետ, բացատրի, որ ընտանիք կազմելով նրանք իրենց վրա են վերցնում մեր պետականության պահպանման առաքելության մի մասնիկը, եւ այսօր ընտանիքներում նվազագույնը չորս երեխայի առկայությունը ծայրահեղ անհրաժեշտություն է: Միայն Հայ առաքելական եկեղեցին է ի զորու կարգավորելու այս խնդիրը, խրախուսելու չորսից ավելի երեխաների ծնունդը հայ ընտանիքներում: Պատմությունից հայտնի են բազում փաստեր, երբ պատերազմներից եւ երկրաշարժերից հետո հայկական գյուղերի քահանաները շրջում էին տնից տուն եւ հորդորում երեխաներ ունենալ: Մոտ մեկ տարի հետո գրեթե բոլոր ընտանիքներում երեխաներ էին ծնվում: Սա օգնել է մեր ազգին ոչ միայն բնակչության թվաքանակի, այլ նաեւ պետականության վերականգնման գործում:

Այսօր արտագաղթի հիմնական պատճառներն են աշխատատեղերի բացակայությունը, ցածր աշխատավարձերը, կենսական անհրաժեշտության այնպիսի ծառայությունների թանկությունը, ինչպիսին առողջապահությունն է: Արտագաղթի հիմնական պատճառներից է նաեւ մեր երկրում տիրող անարդարությունը:

Եթե ամենաբարձր խավից եկող անարդարության՝ Գյումրու քաղաքապետի եւ Սյունիքի մարզպետի որդիների հետ կապված գործերի դեմ իշխանություններն «անզոր են», ապա պետական միջին եւ ցածր օղակների աշխատանքը հնարավոր է դարձնել արդար եւ թափանցիկ: Բացի դրանից՝ բազմազան եւ բազմաբնույթ օրենքների եւ դրանց գրեթե ամենամսյա փոփոխությունների սարդոստայնում հասարակ քաղաքացին մոլորվել է եւ չգիտի, թե որ օրենքով է կարգավորվում իր իրավունքները, մատչելի չեն նաեւ փաստաբանական ծառայությունները: Այս դեպքում ուղակի անհրաժեշտություն է կամ մի առանձին հեռուստաալիքի առկայությունը «Ժողովրդի փաստաբան» պայմանական անունով, կամ նմանատիպ հաղորդաշարերի առկայությունը բոլոր հեռուստաալիքներով, որտեղ հասարակ քաղաքացին կարող է դիմել ամեն պահի եւ ստանալ իրեն հուզող մասնագիտական պատասխան՝ ներգրավելով գործին առնչվեղ բոլոր կողմերին: Եվ քանի որ ժողովրդի հիմնական բողոքը միջին եւ ցածր օղակների պետական չինովնիկներից է, ապա այս դեպքում եւ վերջիններս արդար կաշխատեն, եւ քաղաքացին իրեն պաշտպանված կզգա:

Արտգաղթի հաջորդ եւ հիմնական պատճառը առողջապահական թանկ ծառայություններն են: Ներդրվող առողջության ապահովագրության համակարգը շահույթ հետապնդող ծառայություն է եւ կոչված է ծառայելու արդեն աշխատանք ունեցողներին եւ որոշակի ապահովված մարդկանց: Գործազուրկ եւ անապահով խավի վիճակը շարունակում է վատթարանալ: Հայտնի են բազում դեպքեր, երբ ծնողները իրենց զավակներին փրկելու համար վաճառել են բնակարանը, որպեսզի վճարեն թանկարժեք վիրահատության դիմաց, զրկվել են եւ զավակից, եւ տնից:




Հայաստան երկիրը սահմանադրորեն սոցիալական պետություն է եւ հարիր չէ, եթե չասենք՝ հակասահմանադրական է, նման երկրում պետության կողմից հիվանդ մարդու հաշվին փող աշխատելը: Մեր երկրում առողջապահությունը ամբողջությամբ պետք է լինի անվճար՝ ծննդօգնությունից մինչեւ ամենաբարդ սրտի վիրահատություն: Առաջին հայացքից թվում է, թե սա անհավանական եւ անիրականանալի մի բան է, սակայն եթե հիշենք, որ Հայաստանում եւ Լեռնային Ղարաբաղում կան բազմաթիվ գյուղեր, որտեղ երբ որեւէ ընտանիքում մարդ է մահանում, ամբողջ գյուղով գումար են հավաքում դժբախտութունը հասած ընտանիքին ֆինանսապես օգնելու համար, ապա ակամա հարց է առաջանում՝ իսկ ինչո՞ւ չանել նույնը հիվանդ մարդու դեպքում, ինչո՞ւ թողնել հիվանդին միայնակ իր դժբախտության հետ, ինչու թողնենք, որ նա մահանա, նոր գումար հավաքենք, եկեք այդ գումարը հավաքենք մարդուն փրկելու համար: Մեր Հայաստան մեծ գյուղում ընտանիքների թիվը հասնում է մոտ հինգ հարյուր հազարի: Եթե յուրաքանչյուր ընտանիք միջին հաշվով հինգ հազար դրամ ամսական գումար փոխանցի կառավարության հասույկ՝ առողջապահական ֆոնդին, ապա այսօր կառավարության կողմից ֆինանսավորվող բուժպասարկման ծառայություններին ամսական կգումարվի եւս վեց միլիոն դոլարին համարժեք դրամ:

Իսկ եթե կառավարությունը խնայողաբար օգտագործի բյուջեի գումարները, օրինակ՝ կտրուկ պակասեցնի ծառայողական շքեղ մեքենաների թիվը եւ դրանց վրա ծախսվող բենզինի գումարները, ուղղելով դրանք առողջապահական ֆոնդին, անվճար բուժսպասարկումը մեր երկրում ամենեւին անհավանական չի թվա:

Ինչու նախարարությունների վարչության պետերը, փոխնախարարները եւ պետական բարձր եւ միջին դասի այլ չինովնիկներ պետբյուջեի գումարներով գնված ծառայողական մեքենաներ պետք է ունենան, մինչդեռ ոչ պակաս արժանի մարդիկ մեր երկրում գործազուրկ են: Ինչո՞ւ չհավաքել այդ մեքենաները եւ չտրամադրել հեռավոր եւ սահմանամերձ գյուղերի բազմազավակ ընտանիքներին, ցուցադրելով նրանց նկատմամբ պետության զորակցությունը, հետեւապես նաեւ խրախուսելով ծնելիութունը: Ինչո՞ւ չպակասեցնել անհարկի ասֆալտապատումը (խոսքը անհրաժեշտին չի վերաբերում) եւ առողջ սալիկների անընդհատ փոփոխումը: Սրանք բյուջեից խնայելու մեզ հայտնի ընդամենը մի քանի դրվագներ են միայն: Համոզված ենք, որ ծախսողներին անհամեմատ ավելին է հայտնի:

Արդեն որերորդ տասնամյակն է՝ մեզանից խլվել է մեր երկրի ընդերքը եւ տրվել է չգիտես ում կողմից «ընտրյալներին»: Այսօր կարմրացման եղանակով խլվում է նաեւ մեր ավտոճանապարհների մի մասը: Հասկանալի կլիներ, եթե այդտեղից ստացված եկամուտների մեծ մասը ուղղվեր այդ նույն առողջապահական ֆոնդին, այլ ոչ թե այդ նույն «ընտրյալների» գրպանը:

Առողջապահական ֆոնդը հնարավոր է համալրել նաեւ պետական եւ մասնավոր համակարգում աշխատողների աշխատավարձի մեկ-երկու տոկոսի հաշվին՝ ապահովագրական ծառայության փոխարեն: Այսինքն՝ մեր երկրում գումարներ կան, դրանք ճիշտ կառավարել է պետք: Մի խոսքով՝ շատ ճիշտ կազմակերպելու եւ խիստ վերահսկողության մեխանիզմներ իրականացնելու դեպքում մեր երկրում անվճար առողջապահությունը, եվրոպական ոչ հարուստ մի շարք երկրների նման, իրականություն կդառնա եւ արտագաղթը կվերածվի ներգաղթի:

Եվ վերջում դառնանք հիշատակված մեր ընդհանուր տան «մաքրությանը», ինչը կինը կաներ այդ ընտանիք մուտք գործելուն պես: Իհարկե, հնարավոր է մաքրել եւ պահպանել նույնպես առանց հավելյալ ներդրումների: Պարզապես դրա համար առավել ակտիվ պետք է օգտագործել երկրի ականջներն ու աչքերը՝ ռադիոն եւ հեռուստատեսությունը: Վերջիններս այսօր չեն իրականացնում այն գործառույթը, ինչին կոչված են, այլ հակառակը՝ էժանագին զվարճալի ծրագրերով զբաղված են երիտասարդ սերնդի մեջ գռեհկություն, վայրենություն, տգիտություն սերմանելով: Վաղուց ժամանակն է, որ հատկապես հեռուստատեսությունը հանրօգուտ գործով զբաղվի, սերունդ դաստիարակի, բարեկրթության եւ քաղավարության օրինակելի աղբյուր դառնա: Շատ մեծ գործ կարող է անել նույն հեռուստատեսությունը մեր երկրի մաքրության գործում: Պետք է կազմակերպել շենքերի, բակերի, փողոցների, դպրոցների, համայնքների միջեւ մրցութային հաղորդաշարեր, ներգրավելով ողջ ազգաբնակչությանը, դրվատելով դրականը եւ դատապարտելով բացասականը: Վերականգնելով խորհրդային տարիներին գործող «փոխանցիկ դրոշի» իմաստը, ոլորտը լուսաբանող լրագրողներից կազմված հանձնաժողովը կարող է շնորհել մրցանակը մաքրության գործում հաջողությունների հասած համայնքին: Պետք է պարտավորեցնել նաեւ բոլոր հեռուստաընկերություններին՝ բնակչության կողմից աղտոտումը դատապարտող դիպուկ եւ կարճ տեսահոլովակներ ցուցադրել՝ յուրաքանչյուր գովազդային ընդմիջման ընթացքում: Այս գործը ակտիվ եւ ճշգրիտ իրականացնելու դեպքում կարճ ժամանակում հնարավոր է հասնել մեծ հաջողությունների եւ ամբողջությամբ աղբազերծել մեր երկիրը:

Մի խոսքով՝ մեր ընդհանուր տան գործերը մենք պետք է կարգավորենք, այլ ոչ թե վարկածներ առաջ քաշենք, քանզի մենք իրավունք չունենք մեր պետականությունը կորցնելու: Միշտ պետք է հիշենք, որ ցեղասպանություն իրականացվում է պետականություն չունեցող ազգերի նկատմամբ: Առավել եւս, որ հարեւան երկու երկրների վաղեմի երազանքն իրականացնելու համար ամենամեծ խոչընդոտը Հայաստանն է:

**ԺԱՍՄԻՆԱ ՂԵՎՈՆԴՅԱՆ**
«Ներուժ» կրթամշակութային ՀԿ նախագահ

# Իլհամ Ալիեւի «նոր» կառավարությունը. Սաֆար Աբիեւն այլեւս պաշտպանության նախարար չէ

Երեկ օրվա վերջին ադրբեջանական լրատվամիջոցները հայտնեցին, որ Իլհամ Ալիեւը մեկ հրամանագրով նշանակել է «նոր» կառավարության անդամներին: Իշխող կուսակցության գործադիր քարտուղար Ալի Ահմեդովը, որը գլխավորում էր նրա նախընտրական շտաբը, նշանակվել է փոխվարչապետ:

Պաշտոնից ազատվել է սոցիալական ապահովության նախարար Ֆիզուլի Ալեքպերովը, որի անունը շրջանառվել էր գարնանը Իսմայիլլիի շրջանում ծագած սոցիալական բունտի առթիվ: Իլհամ Ալիեւը պաշտոնանկել է նաեւ գյուղատնտեսության նախարար Իսմեթ Աբասովին:

Ամենաանսպասելին պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի պաշտոնազրկումն է: Թեեւ Աբիեւի մասին ադրբեջանական մամուլում գրեթե անընդմեջ տեղեկություններ էին հայտնվում, որ «կազատվի պաշտոնից», բայց, ըստ երեւույթին, նրա ճակատագիրը որոշելիս վճռական է եղել նախագահական «ընտրություններից» հետո Բաքվում ԱՄՆ դեսպանի հետ նրա հանդիպման շուրջը ծագած սկանդալը:

Բանն այն է, որ, իր նստավայրում ընդունելով դեսպանին, Աբիեւը ՊՆ մամլո ծառայության միջոցով տեղեկատվություն էր տարածել, թե ամերիկացի դիվանագետն ասել է, որ «նախագահական ընտրությունները մնացել են անցյալում, իսկ հետընտրական գնահատականները չեն կարող ազդել արդյունքների վրա», ինչին Բաքվում ԱՄՆ դեսպանատունը չափազանց կարճ էր արձագանքել. «Մենք Ալիեւին չենք գովաբանել»:

Աբիեւը, թերեւս հասկանալով, որ կատարվածն իր վրա թանկ կնստի, որոշել եւ անցել էր սպառնալիքների, թե «կհրապարակվի դեսպանի խոսքերի ձայնագրությունը», ինչից պարզ էր դարձել, որ Աբիեւ-Մորնինգսթար առանձնազրույցն ադրբեջանական կողմից գաղտնալսվել եւ ձայնագրվել էր: Սա արդեն չափից դուրս էր, որպեսզի Աբիեւը կրկին նշանակվեր պաշտպանության նախարարի պաշտոնում:

Հետաքրքրականը, սակայն, այն է, որ Աբիեւի փոխարեն պաշտպանության նախարար է նշանակվել ՆԳ նախարարի նախկին տեղակալ, ներքին զորքերի հրամանատար գեներալ-մայոր Զաքիր Հասանովը: Ուշագրավ է, որ նախարարական պաշտոնը պահպանել է Ռամիլ Ուսուբովը՝ ՆԳ անփոխարինելի նախարարը, որը շուտով կդառնա 70 տարեկան:

Իրենց պաշտոններում վերանշանակվել են նաեւ փոխվարչապետներ Ալի Հասանովը, Աբիդ Շարիֆովը, Էլչի Էֆենդիեւը եւ Յաղուբ Էյուբովը: Առ այս պահը հայտնի չէ՝ կշարունակի՞ պաշտոնավարել աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիեւը, որը նույնպես սկանդալային պատմության մեջ էր հայտնվել դարձյալ ԱՄՆ դեսպանի հետ առանձնազրույցներից գաղտնիքներ հրապարակելու առթիվ, թե՞ նրան կփոխարինի որեւէ մեկը: Վ. Ա.

# Չինաստանը վերակենդանացնում է Մետաքսի մեծ ճանապարհը



Չինաստանում լրջորեն մտածում են Մետաքսի մեծ ճանապարհի վերակենդանացման մասին, որով ժամանակին Եվրոպա էին տանում մետաքս, համեմունքներ եւ թեյ: Սակայն խոսքը ոչ թե հին քարավանային ճանապարհի մասին է, այլ Կենտրոնական Ասիայի տարածքում տնտեսական ինտեգրման նոր նախագծի մասին:

Փորձագետների կարծիքով, այդ նախագիծն ուղղակիորեն բախվում է տարածաշրջանում Ռուսաստանի շահերին: Ոմանք ավելացնում են, որ նախագիծը փաստորեն ձեւակերպում է այն, ինչն արդեն իրականություն է դարձել. միջինասիական երկրները ավելի ու ավելի մեծ չափով են ներքաշվում Չինաստանի ազդեցության ոլորտում, հեռանալով հյուսիսային մեծ հարեւանից:

«Մետաքսի մեծ ճանապարհի տնտեսական գոտու» մասին բարձր ամբիոններից առաջին անգամ խոսեց ՉԺՀ նախագահ Սի Ցզինպինը՝ Ղազախստանում՝ Նուրսուլթան Նազարբաեւի անվան համալսարանում ունեցած ելույթում, նշում է BBC-ն: Ելույթին արձագանքեցին չինական լրատվամիջոցները: Ելույթից մեկ ամիս անց «Ժենմին Ժիբաո» թերթը, որը ՉԺՀ Կոմկուսի պաշտոնաթերթն է, մի քանի հրապարակումներում նկարագրեց նախագծի էությունը եւ առավելությունները:

«Մետաքսի մեծ ճանապարհի տնտեսական գոտու» գաղափարը տնտեսական համագործակցության տարբեր եղանակներով Կենտրոնական, Արեւելյան, Հարավային եւ Արեւմտյան Ասիան միավորելու փորձ է, իր հոդվածներից մեկում նշել է միջազգային փորձագետ Ցզյան Ին, որը Չինաստանի հասարակական գիտությունների ակադեմիայի անդամ է:

Ի տարբերություն Ռուսաստանի եւ ԱՄՆ-ի, ՉԺՀ-ն չի ձգտում տարածաշրջանային տիրապետության, չի միջամտում երկրների ներքին քաղաքականությանը, այլ միայն տնտեսական կապեր է հաստատում, շարունակում է չին կոմունիստների պաշտոնաթերթը:

Իրոք, տնտեսական կապերի հաստատման գծով Պեկինը միայն այս տարվա աշնանը բավական մեծ աշխատանք է կատարել: Սեպտեմբերին Սի Ցզինպինը շրջագայություն կատարեց Կենտրոնական Ասիայի երկրներում: Չինական մամուլը այդ այցն անվանեց պատմական: Շրջագայության ընթացքում ստորագրվեցին ավելի քան 60 մլրդ դոլար ընդհանուր գումարով պայմանագրեր: Ուզբեկստանում նա ստորագրեց 15,5 մլրդ դոլարի 31 համաձայնագիր, որոնք վերաբերում են նավթի, գազի եւ ոսկու արդյունահանմանը: Թուրքմենստանում ՉԺՀ նախագահը ստորագրեց 7,6 մլրդ դոլարի 8 համաձայնագիր գազի վերաբերյալ: Ղազախստանում չինական CNPC նավթային ընկերությունը ձեռք բերեց Կասպից ծովի հանքավայրերից մեկը մշակող նավթային կոնսորցիումի բաժնետոմսերի 8 տոկոսը: Գործարքի գումարը կազմեց 5 մլրդ դոլար: Ղրղզստանում նախագահը ստորագրեց 5 մլրդ դոլարի 8 համաձայնագիր, որոնք վերաբերում են նոր գազամուղի կառուցման համատեղ ծրագրերին:

